Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝

Թեմա՝ Բուլլիինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Լիլյա Շահինյան

Ն.Գետաշեն 2022

Բովանդակություն

Ներածություն.....3

Բուլլիինգի դրսևորումները և դրանց հետևանքները.....4

Բուլլիինգի պատճառները.....8

Բուլլիինգի կանխարգելումը դպրոցներում.....9

Վերջաբան.....15

Գրականություն.....16

...ոչ բուլլիինգին, ոչ ատելությանը...

Ք. Դումիթրու

Ներածություն

Ժամանակակից աշխարհում աստիճանաբար մեծանում է ուշադրությունը ուսումնական հաստատություններում, ի մասնավորի դպրոցներում բուլլինգի դրսևորումների և դրանց կանխարգելման նկատմամբ: Ըստ էության որքան հասուն և զարգացած է հասարակությունն, այնքան մեծ է նրանում գիտակցությունն առ այն, որ երեխաների կողմից իրենց հասակակցի կամ հասակակակիցների նկատմամբ այս կամ այն կերպ գործադրվող ճնշումները կարող են ունենալ ծանր հետևանքներ: Երևույթի առկայությունն արդեն նշանակում է, որ գոյություն ունեն հոգեբանական ինչ-ինչ առանձնահատկություններ, որոնք մղում են երեխաներին բռնության ենթարկել իրենց հասակակիցներին: Միևնույն ժամանակ դրան անդրադառնում են ոչ բավարար չափով: Այս համատեքստում բավական կարևոր է թեմայի համապարփակ ուսումնասիրությունը, քանզի յուրաքանչյուր անդրադարձ կարող է տալ հիմնախնդրի լուծման որևէ եղանակ: Սրանով էլ պետք է պայմանավորել թեմայի արդիականությունը: Բացի այդ դպրոցներում անչափահասների նկատմամբ բռնության վերացումը ունի կարևոր նշանակություն ապագայում հոգեպես հավասարակշիռ անհատների ձևավորման և առողջ ու ներդաշնակ հասարակություն ունենալու համար:

Թեմային անդրադարձ է կատարվել դպրոցներում երևույթի դրսևորման և դրանց հնարավոր կանխարգելման ասպեկտով: Արդ սրանից բխում է հետազոտական աշխատանքի նպատակը, այն է՝ ցույց տալ բուլլինգի երևույթի դրսևորման տարակերպերը և ներկայացնել դրանց կանխարգելման միջոցները: Վերոնշյալ նպատակից բխեցվել և քննարկվել են հետևյալ հիմնախնդիրները՝

1. Որո՞նք են բուլլիինգի դրսևորումները դպրոցներում և դրանց հետևանքները:
2. Ի՞նչ հիմնապատճառներ կարող են լինել երևույթի հիմքում:
3. Ի՞նչ աշխատանքներ են տարվում երևույթի կանխարգելման համար աշխարհի տարբեր երկրներում, և ինչպիսի՞ն է իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտական աշխատանքը կատարվել է համեմատական և համադրական մեթոդների կիրարկմամբ:

I

Բուլլիինգի դրսևորումները և դրանց հետևանքները

Բուլլիինգի երևույթը հոգեբանության կարևոր հիմնահարց է համարվում, և այն հոգեբանական գիտությունների դաշտ է տեղափոխվել շնորհիվ նորվեգացի հոգեբան Դ. Օլվեուսի[1]: Առաջ անցնելով նշենք, որ բուլլինգի դեմ պայքարի առաջին ծրագրերից մեկը դարձյալ տրվել է նրա աշխատանքներում[2]: Բռնությունը դպրոցներում ամբողջ աշխարհում մեծ տարածում գտած երևույթ է: Համաձայն «Բուլլիինգի դեմ պայքարի եվրոպական ճամբարի» (European Campaign against Bullying) տվյալների՝ մասնավորապես Լիտվայում դպրոցում բռնության են ենթարկվում անչափահասների 51%-ը, Էստոնիայում՝ 50%-ը, Բուլղարիայում՝ 43%-ը, Հունաստանում՝ 31%-ը, Լատվիայում՝ 25%-ը, Իտալիայում՝ 15%-ը[3]: Այսպիսով հիշյալ երկրներում ստացվում է տարեկան վիճակագրության հետևյալ պատկերը.



2018 թ. տվյալներով Եվրոպական մի շարք երկրներում, ամսվա ընթացքում դպրոցներում անչափահասների բռնության դեպքերի վիճակագրությունն այսպիսին է[4].

---

[1] А. А. Бочавер, К. Д. Хломов, Буллинг как обьект исследований и культурный феномен, с. 149-150//https://cyberleninka.ru. 03.11.2022.

[2] Д. В. Молчанова, М. А. Новикова, Противадействие школьному буллингу: Анализ международного опыта. Современная аналитика образования,№ 1 (31), 2020, с. 4

[3] Bullying prevention in European schools-the Network//https:cesie.org. 09.11.2022.

[4] Fequency of bullying in European countries 2018-Statista//https://www.statista.com. 05.11.2022.



Գերմանիայում կատարավել է այսպիսի հետաքրքիր վիճակագրություն[5]:



Իբրև հին երևույթ իր դրսևորումների դիտանկյունից այն ժամանակի ընթացքում ենթարկվել է փոփոխությունների, սակայն ընդհանուր դրսևորումներով դրանք մնացել են նույնը:

Հայսմ գրականությունում հանդիպում ենք բուլլիինգի դրսևորումների դասակարգման տարբեր եղանակների, սակայն դարձյալ պետք շեշտել, որ դրանք իրարից այնքան էլ չեն հեռանում: Այսպես բուլլինգը կարող է լինել ուղղակի և անուղղակի[6]: Այսպիսի բաժանումը պայմանավորված է այն հանգամանքով՝ արդյոք

[5] Zahlen und Fakten über Mobbing//https://zeichen-gegen-mobbing.de. 16.11.2022.
[6] А. А. Бочавер, указ. соч., с.150

հայտնի է, ով է բուլլինգի ենթարկողը թե՝ ոչ[7]: Տարբերակում են նաև ֆիզիկական, վերբալ բուլլինգ և սոցիալական ագրեսիա[8]: Բուլլինգի մեկ այլ դրսևորում է նաև քիբբերբուլլինգը (cyber bullying[9]), որը բնականաբար առաջ է եկել համացանցի տարածումից հետո: Բուլլինգի նշված տեսակները կարող են դրսևորվել տարբեր կերպ. վերբալ (անունը կրկնել, ծաղրել, սարկազմ, կեղծ լուրերի տարածում, սեռական բնույթի վիրավորական կամ սպառնացող մեկնաբանություններ, բացասական արտահայտություններ անձի մշակույթի, կրոնի, մաշկի գույնի, ընտանիքի, տան, սեռական կողմնորոշման, գենդերային տարբերությունների և այլնի պատճառով, բացասական արտահայտություններ անձի արտաքին առանձնահատկությունների, ֆիզիկական թերությունների պատճառով), մեկուսացումը (չունենալ ընկերներ, խմբից առանձնացված լինել, արգելել բուլլինգի ենթարկվողի հետ շփվել), ահաբեկում (վիրավորական և սպառնալից ժեստեր), քիբբերբուլլինգ (ատելության նամակներ կամ տեսքստային հաղորդագրություններ), ֆիզիկական (հարված, իրերը թաքցնելը կամ վնասելը, հրել և այլն)[10]:

Տարբերվում են նաև բուլլինգի ձևերը քաղաքներում և գյուղերում: Մասնավորապես վերբալ և ֆիզիկական ճնշումները քաղաքներում ավելի հաճախ են տեղի ունենում[11]:

Սակայն հարկ է ունենալ նկատառում առ այն, որ բուլլինգի ուղղակի և անուղղակի դրսևորումները կարող են դիտարկվել իբրև երկու մեծ խմբեր, իսկ մնացած տեսակները իբրև դրանց ենթատեսակներ: Այսպես օրինակ ֆիզիկակական բուլլինգը կարող է հանդես գալ իբրև ուղղակի բուլլինգի տեսակ, քիբբերբուլլինգը, վերբալ բուլլինգը, և՛ ուղղակի և՛ անուղղակի, պայմանավորված այն հանգամանքով արդյոք բուլլինգի ենթարկվողը գիտի ում կողմից է ենթարկվում ճնշումների, թե՝ ոչ:

Հստակ է, որ բուլլինգի կարող է ենթարկվել ցանկացածը, սակայն անցումը ներառական կրթության, հարդյունս որի հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաները պետք է սովորեն մյուսների հետ, կարող է հանգեցնել բուլլինգի նոր դրսևորումների և նման դեպքերի հաճախակիացման[12]: Եվ սա իսկապես կարող է բավական լուրջ մարտահրավեր լինել կրթական ոլորտի համար:

Ցավոք երևույթը այս ամենի հետ մեկտեղ վաղանցիկ չէ, և կարող է ունենալ շատ ծանր հետևանքներ՝ սկսած հոգեբանական խնդիրների առաջացումից կամ խորացումից մինչև սպանություն ու ինքնասպանություն: Այսպես՝ բուլլինգի ենթարկվող անչափահասները ավելի շատ են ենթարկվում սթրեսների, քան նրանք,

---

[7] М. А. Новикова, А. А. Реан, Влияние школьного климата на возникновение травли: отечественный и зарубежный опыт исследования, с. 79//https://cyberleninka.ru. 06.11.2022.
[8] там же.
[9] C. Dumitru, R. Emilia Ciucă, Understanding school bullying, EDU world 2018, The 8th international conference//europeanproceedings.com. 04.11.2022.
[10] C. Dumitru, op. cit., pp. 438-39.
[11] М. А. Новикова, указ. соч., с 80.
[12] C. Dumitru, R. Emilia Ciucă, op. cit. p. 438.

ովքեր չեն բախվել խնդրին[13]: Իսկ սթրեսը նաև հոգեկան առողջության խաթարման և այնուհետև ինքնասպանության տանող տանող կարևոր գործոն է[14]: Այսպես 2022 թ. հոկտեմբերի 12-ին The Guardian-ը գրում է 12-ամյա աղջկա ինքնասպանության մասին, ով մինչ այդ ունեցել է հոգեկան առողջության խնդիրներ, իսկ պատճառը դասընկերների կողմից անպատշաճ հաղորդագրությունների ուղղարկումն է եղել, մասնավորապես հետևյալը. «Դու թուլամորթ ես, դու չես կարող նույնիսկ ինքնասպան լինել[15]»:

Շատ կարևոր է նշել նաև, որ երեխաները դպրոցում կարող են ենթարկվել ճնշումների ոչ միայն հասակակակիցների, այլ նաև ուսուցիչների կողմից: Այսպես 2021 թ. Զապորոժյեում 15-ամյա աղջիկը ինքնասպանություն է գործում: Նամակում, որը նա թողել էր, գրված է եղել, որ ինքնասպանության պատճառը դասղեկի և ուկրաիներենի ուսուցչուհու վատ վերաբերմունքն էր իր հանդեպ[16]: Սա հատկապես արժանի է ուշադրության, քանզի ինչպես կտեսնենք հաջորդիվ, բուլլինգի կանխարգելման գործընթացում շատ կարևոր դեր է վերապահված հենց դասավանդող ուսուցիչներին:

Բուլլինգի ենթարկվող անչափահասները հաճախ նաև վտանգավոր են դառնում մյուսների համար, իրականացնելով զանգվածային սպանություններ: 2022 թ. մայիսի 26-ին Սալվադոր Ռամոսը Թեքսասի (Հնդկաստան) դպրոցներից մեկում սպանում է 22 մարդու, այդ թվում՝ 19 երեխաների: Նրա հարազատները պատմել են, որ Սալվադորը տարիներ առաջ դպրոցում ենթարվել է ճնշումների[17]:

Նմանատիպ տասնյակ օրինակներ կարելի է տալ, սակայն կարծում ենք, որ վերոնշյալը, արդեն իսկ բավարար է հստակ պատկերացում կազմելու այն տարաբնույթ հետևանքների մասին, որը կարող է լինել դպրոցական տարիքում պարբերաբար ճնշումների ենթարկվելու պատճառով:

Ի մի բերելով ասվածը կարող ենք եզրակացնել, որ բուլլինգի դրսևորումները կարող են բազմաթիվ լինել, և տարբեր կարող են լինել դրանց հետևանքները: Սակայն մի բան ընդհանրական է, այն, որ բուլլինգի ենթարկումը անցանկալի հետևանքներ կարող է ունենալ թե՛ ճնշման ենթարկվողի և թե՛ շրջապատողների համար: Ընդսմին բուլլինգի հետևանքը կարող է դրսևորվել նույնիսկ տարիներ անց, քանզի դա շատ հաճախ անդառնալի կերպով է անդրադառնում երեխաների հոգեկան առողջության վրա:

---

[13] Suicide and Bullying, Issu Brief, Suicide prevention resource center//https://sprc.org>files>library., p.2. 10.11.2022.

[14] Ibd

[15] The Guardian, News website of the year, Bullied 12-year-old struggled to get mental health support before suicide, inquest hears, https//theguardian.com. 10.11.2022.

[16] В Запорожье 15-летная девушка покончила с собой из-за травли в школе, 5. TV// www.5.ua 10.11.2022.

[17] Texas gunman, who killd 22, was bullied at school, had troubled childhood, //https//www.indiatoday.in., 11.11.2022.

II
Բուլլիինգի պատճառները

Բուլլիինգի պատճառների քննությունը կարևոր է, քանզի մինչ երևույթի կանխարգելումը, որին կանդրադառնանք, նախ և առաջ հարկավոր է վերհանել դրա պատճառները:

Հատկապես նախկինում անչափահասների կողմից իրենց հասակակիցների նկատմամբ գործադրվող բռնությանը վերաբերում էին իբրև բնականոն երևույթի[18]: Մինչդեռ պետք է անպայման նկատի ունենալ, որ դրանց հիմքում ընկած են սոցիալ-հոգեբանական լրջագույն պատճառներ: Անդրադառնալով բուլլիինգի դրսևորման պատճառներին հարկավոր է նկատի ունենալ այն գործոնները, որոնց առկայության պարագայում մեծանում է երևույթի ի հայտ գալու ռիսկը: Այս համատեքստում առանձնացվում են երեք մեծ գործոններ որոնք ընդգրկում են ընտանիքը, դպրոցը, և անհատական բնութագրերը[19]:

Ընտանիքի գործոնը երկու կերպ կարող է ազդել: Առաջինն այն է, թե սոցիալ-տնտեսական ինչպիսի մակարդակ ունի և երկրորդ՝ թե ինչպիսի մթնոլորտ է տիրում ընտանիքում: Մասնավորապես կարևորվում է ընտանիքի սոցիալ-տնտեսական կացությունը: Երեխաները քիչ ապահովված ընտանիքներից ավելի շատ են ենթարկվում ճնշման հասակակիցների կողմից[20]: Նաև այն երեխաները որոնց ծնողները չունեն բարձրագույն կրթություն, առավել հակված են դաժանության, կամ գտնվել բուլլինգի ենթարկվելու վտանգի տակ[21]:

Ընտանիքի դերը այս գործընթացում կարևորվում է նաև մեկ այլ դիտանկյունից, այն, թե ինչպիսի մթնոլորտ է տիրում ընտանիքում: Մասնավորապես ներդաշնակ հարաբերությունները և ջերմությունը կարևոր գործոն են համարվում[22]: Եթե ընտանիքներում առկա է մեծերի կողմից կրտսեր անդամների նկատմամբ ճնշում, կամ երեխաներն անընդհատ քննադատվում են ծնողների կողմից, ապա այսպիսի ընտանիքների երեխաները կամ դառնում են ագրեսոր, կամ հայտնվում զոհի դերում[23]:

Մյուս կողմից կարևորվում է դպրոցական միջավայրը: Այսինքն շատ կարևոր է կոլլեկտիվ պատկերացումների, արժեքների ամբողջությունը: Դպրոցներում, որտեղ բուլլինգի դրսևորումները առավել քիչ են, պահպանվում են կանոնները, ուսուցիչների՝ օգնելու պատրաստակամությունն առավել մեծ է, աշակերտներն ունեն հնարավորություն մասնակցելու կանոնների մշակմանը, որով բուլլինգի

---

[18] Новикова М. А. Распространенность школьной травли среди старшеклассников в РФ: социо-экономические и образовательные факторы, с. 156,//https://publications.hse.ru.14.11.2022.
[19] там. же.
[20] Новикова М. А., указ. соч., с. 157.
[21] там же.
[22] Новикова М. А., Реан А. А., Семейные предпосылки вовлеченности ребенка в школьную травлю: влияние психологических и социальных характеристик семьи,с. 114,//https://psyjournals.ru. 14.11.2022.
[23] Новикова М.. А., указ. соч., с. 114-15.

ենթարկողները պետք է պատժվեն, աշակերտների մոտ ձևավորվում է հստակ պատկերացում բուլլինգի՝ իբրև բացասական երևույթի մասին[24]: Այդու վերոնշյալ գործոնների բացակայությունը, այլ կերպ ասած դպրոցում ներդաշնակ և հանդուրժողական մթնոլորտի բացակայությունն է հաճախ դառնում երեխաների ագրեսիվ վարքագծի և կամ հասակակիցներին ճնշման ենթարկելու պատճառ:

Անհատական նկարագրի տեսանկյունից դաժան վերաբեմունքի ենթարկվելու պատճառ կարող են լինել երեխայի արտաքին նկարագիրը, կամ սովորելու մակարդակը[25]:

Վերոնշյալներին հավելենք նաև միտքն առ այն, որ դպրոցում բուլլինգի դրսևորումների նախադրյալ կարելի է համարել նաև երևույթի առկայությունը նախադպրոցական տարիքում և դրա նկատմամբ ոչ բավարար ուշադրությունը: Այսպես ուսումնասիրողներից Շալագինովը ընդգծում է նախադպրոցական հաստատություններում բուլլինգի դեպքերի կանխման կարևորությունը, ընդգծելով մեծահասակների անուշադրության կամ պարզապես այն մտածելակերպի սխալականությունը, որ պետք չէ միջամտել երեխաների հարաբերություններին[26]:

Բուլլիինգի ընթացքում նաև պետք է ընդգծել երրորդ կողմի՝ այսինքն դիտողների դերը: Դրանք բուլլերի ընկերներն են, մարդիկ, որոնց համար միևնույն է, մյուսները պարզապես դիտողի դերում կարող են լինել, որոշ մասը պոտենցիալ պաշտպաններ[27]: Պետք է նշել, որ անտարբերությունը ևս մեկ խթան կարող է համարվել բուլլիինգի դեպքերի շատացման, քանզի այն նաև շրջապատողների խնդիրն է[28]:

III
Բուլլիինգի կանխարգելումը դպրոցներում

Բուլլիինգի պատճառներին և դրա դրսևորումներին ծանոթանալառվ պարզ է դառնում, որ շատ կարևոր է դրա կանխարգելման միջոցների և եղանակների մշակումը: Նախորդ դարավերջից սկսած կատարվում է հակաբուլլիինգային ծրագրերի մշակում, որը շարունակվում է առ այսօր: Չնայած առկա որոշակի տարբերություններին հակաբուլլիինգային ծրագրերն ունեն առանցքային տարրեր, որոնք փոխկապակցված են: Դրանք են՝

- Աշխատանքներին բոլոր սովորողների, այլ ոչ թե միայն բուլլիինգի անմիջական մասնակիցների մասնակցության ապահովումը,

[24] Новикова М. А. указ. соч., 157-158.
[25] Новикова М. А., указ. соч., с. 158-59.
[26]Шалагинова К. С., Чилачава М. К., Предпосылки проявления буллинга в дошкольной образовательной организации как индикатор неблагополучия в детском коллективе// с. 165,//https://cyberleninka.ru. 15.11.2022.
[27] Горинова Е., «Свидетели травли: влияние, предпосылки поведения, точки роста», с. 25//https://fcprc.ru.15.11.2022.
[28] там же.

- Նախապատվություն տալ այնպիսի ելքերին, որոնցում շեշտը դրվում է այն բանի վրա, որ մեղավորին հնարավորություն տրվի ուղղելու իր սխալները, ի հակակշիռ այն ծրագրերին, որոնցում կարևորվում է պատժի գործոնը,
- Կատարել իրազեկման և հոգեբանական աշխատանքներ ծնողների, ուսուցիչների և բոլոր նրանց հետ, ովքեր այս կամ այն կերպ մասն են կազմում դպրոցական համայնքի[29]:

Հակաբուլլինգային քաղաքականության իրականացման առումով առաջատարը ԱՄՆ-ն է, Մեծ Բրիտանիան, Սկանդինավյան երկրները: Հակաբուլլինգային առաջին ծրագիրը, ինչպես արդեն նշել ենք, մշակվել է նորվեգացի Դ. Օլվեուսի կողմից, և այն ամենահաջողված ու արդյունավետ ծրագրերից մեկն է: Ուստի կարևոր ենք համարվում անդրադառնալ այդ ծրագրին, որպեսզի նաև հասկանալի լինի, թե որքանով կարող է այն կիրառելի լինել Հայաստանում: Դեռևս 1970-ական թվականների սկզբին Օլվեուսը նախաձեռնեց աշխարհում առաջին համակարգված ուսումնասիրությունը բուլլինգի վերաբերյալ: Նրա ուսումնասիրության արդյունքները տպագրվել են 1973 թ. Շվեդիայում, իսկ 1978 թ. ԱՄՆ-ում: Սակայն պետական մակարդակով հակաբուլլինգային քաղաքականություն Նորվեգիայում սկսեց իրականացվել այն բանից հետո, երբ 1983 թ. Նորվեգիայի հյուսիսում երեք դեռահաս տղաներ ինքնասպան եղան: Պատճառն ամենայն հավանականությամբ, հասակակիցների կողմից գործադրվող ահաբեկումն էր: Այնուհետև Նորվեգիայի կրթության նախարարությունը նախաձեռնեց հակաբուլլինգային արշավ, հարդյունս որի մշակվեց Օլվեուսի հակաբուլլինգայյին ծրագրի առաջին տարբերակը:

Օլվեուսի ծրագիրը[30] հասանելի է այն առումով, որ այն կարելի է ադապտացնել յուրաքանչյուր դպրոցի կարիքներին և չափերին: Հակաբուլլինգային այս ծրագիրը արդյունավետորեն կարելի է կիրառել կրտսեր, միջին և ավագ դպրոցներում: Այն նախատեսված է բարելավելու հասակակիցների հետ հարաբերությունները, դպրոցները դարձնելու առավել ապահով միջավայր աշակերտների կրթության և զարգացման համար: ՕԲՓՓ-ն սահմանել է հետևյալ նպատակները.

- Նվազեցնել անչափահասների շրջանում ահաբեկման դեպքերը,
- Կանխարգելել բռնության նոր դեպքերի առաջ գալը,
- Նպաստել դպրոցում հասակակիցների հետ ավելի լավ հարաբերությունների հաստատմանը:

Ծրագիրը նախատեսում է մեծ աջակցություն նրանց, ովքեր ենթարկվում են բռնության, և առավել ուժեղ միջամտություն այն սովորողների վարքագծին, ովքեր իրականացնում են ահաբեկում և բռնություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծրագիրը շատ արդյունավետ է և 50 տոկոսով նվազեցրել է բուլլինգի դեպքերը, առհասարակ նվազեցրել աշակերտների հակասոցիալական վարքագծի դեպքերը:

[29] Молчанова Д. В., указ. соч., с. 6
[30] The Olweus Bullying Prevention Program (OBPP)/https://www.violencepreventionworks.org. 15.11.2022.

1990-ական թվականներին ծրագիրը գործարկվում է ԱՄՆ-ում: Այն ներառել է Հարավային Կարոլինայի 18 միջնակարգ դպրոցներ: Մեկ տարի անց հետազոտողները նկատել են, որ զգալիորեն նվազել են տղաների և աղջիկների կողմից ահաբեկման ենթարկվելու, սոցիալական մեկուսացման դեպքերը: Այդու ծրագիրը կարող է համարվել կիրառելի Նորվեգիայից բացի նաև այլ երկրներում: Ծրագրի՝ ԱՄՆ-Ի տարբեր նահանգներում հաջողությամբ կիրառման բազմաթիվ դեպքեր գոյություն ունեն:

Հակաբուլլիինգային մեկ այլ ծրագիր է «Դրական գործողություն»-ը[31] (Positive Action), որը շատ է կարևորում բուլլիինգի կանխարգելումը կամ դեպքերի նվազեցումը, քանզի այն շատ վատ հետևանքներ կարող է ունենալ երեխաների առողջության և կյանքի համար: Երեխաների շրջանում բուլլիինգի դեպքերը կանխարգելելու համար ծրագիրը զբաղվում է մի քանի ուղղություններով, այն է՝ ծնողների ներգրավվածություն, համայնքի ներգրավվածություն: Հակաբուլլիինգային այս ծրագիրը հիմնված է սոցիալ-զգացմունքային ուսուցման փիլիսոփայության և այն ուղերձի վրա, որ երեխաները լավ են զգում, երբ դրական գործողություններ են անում, ներառյալ նաև մյուս երեխաների հետ վարվել այնպես ինչպես իրենք են ուզում, որ վարվեն իրենց հետ: Սովորաբար ծրագրին մասնակից երեխաները սովորում են այն գործիքներն ու բառապաշարը, որն անհրաժեշտ է ահաբեկմանը կառուցողական և առողջ ձևերով դիմակայելու համար, ինչպես նաև հատուկ ռազմավարություններ՝ մեղմելու իրավիճակները, երբ ինչ-որ մեկը ցուցաբերում է ագրեսիվ վարքագիծ:

Իբրև կանոն երեխաները ծրագրին մասնակցում են որպես ահաբեկման ենթարկող (բուլլեր), զոհ կամ երրորդ կողմ: Եվ կոնկրետ իրավիճակներում սովորում են կիրառել անհրաժեշտ գործիքներ: Ծրագրին մասնակցում են նաև ծնողները: Շատ կարևոր է այն, որ հակաբուլլիինգային այս ծրագիրը նպատակ ունի գտնել և վերացնել բուլլիինգի հիմքում ընկած պատճառները:

Այս ծրագրի հիմքում ընկած է «Միտք-գործողություն-Զգացմունքներ» շրջանը (անգլ.՝ The Thoughts-Actions-Feelings Circle (TAF)): Այս սկզբունքն աշխատում է այսպես. մեր մտքերն առաջնորդում են մեր գործողությունները, գործողությունները՝ մեր զգացմունքները և վերջինս առաջնորդում է ավելի շատ մտքեր: Երբ այս շրջանը բացասական է, աշակերտները չեն ցանկանում սովորել, իսկ եթե դրական է, նրանք ցանկանում են սովորել: Ծրագրի էությունն այն է, որ շեշտը դրվի այն գործողությունների վրա, որոնք նպաստում են առողջ և դրական շրջանակի ստեղծմանը: Շատ կարևոր է այն, որ այս ծրագրի գործարկումը նույնպես բազմաթիվ դրական արդյունքներ է տվել: Պարզապես այս դեպքում ամենաքիչը երկու ուսումնական տարի է անհրաժեշտ, որպեսզի ծրագիրն արդյունք տա:

[31] Evidence-Based Bullying Prevention Programs and Curriculum//https://www.positiveaction.net. 17.11.2022.

Հաջորդ կարևորագույն հակաբուլլիինգային ծրագիրը Կիվա-ն է (KiVa), որը մշակվել է Ֆինլանդիայում՝ Թուրքուի համալսարանում Կրթության և մշակույթի նախարարության կողմից: Այս ծրագիրն առաջարկում է կոնկրետ գործիքների և նյութերի լայն տեսականի՝ դպրոցներում բռնության դեմ պայքարի համար[32]: ԿիՎա-ն ուսուցիչների համար առաջարկում է պատրաստի նյութեր: Ծրագրի առանցքում կանխարգելումն է: Նյութերն ընդգրկում են ձեռնարկներ, առցանց խաղեր, ծնողների համար ուղեցույց, տեղեկատվական նամակներ, առցանց հարցումներ, տեսահոլովակներ, պաստառներ, բուլլիինգի ենթարկված աշակերտի հետ ճիշտ զրուցելու և ծրագիրն իրականացնելու այլ ցուցումներ[33]:

Հակաբուլլիինգային այս ծրագրի նպատակն է կանխել բռնությունը: Այն փորձում է ձևավորել կառուցողական վարքագիծ, մղել երեխաներին պատասխանատվություն ստանձնել խոցելի հասակակիցներին աջակցելու համար[34]:

Կարևոր է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երկիր կարող է դառնալ այս ծրագրի անդամ, և այդպիսով այն կիրառելի դարձնել դպրոցներում:: Սակայն դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է, որ տվյալ երկրում կամ տարածաշրջանում լինի ծրագրի գործընկեր կազմակերպություն: Կատարելով վճարումներ նախագծի շրջանակներում տրամադրվում են համապատասխան նյութեր:

Մյուս կարևոր բաղադրիչը դասընթացավար դառնալու հնարավորությունն է: Դրա համար անհրաժեշտ է իբրև գործընկեր կազմակերպության անդամ 5-օրյա դասընթացների մասնակցել Ֆիննլանդիայի Թուրքու քաղաքում, որից հետո դասընթացավարը պատասխանատվություն է կրում ուսուցիչների վերապատրաստման համար:

Հարկավ ծրագրի իրագործումը պահանջում է ֆինանսական զգալի ներդրումներ, սակայն կարևոր է այն, որ ընձեռվում է հնարավորություն հակաբուլլիինգային նման արդյունավետ ծրագրին մասնակցելու համար: Ծրագրին միացել են մեկ տասնյակից ավելի երկրներ ոչ միայն Եվրոպայում՝ Բելգիան, Չիլին, Էստոնիան, Իռլանդիան, Իտալիան, Նոր Զելանդիան, Իսպանիան և այլն, ինպես նաև Եվրոպական դպրոցների ցանցը (The European School network) Բելգիայում, Հունաստանում, Իտալիայում, Լյուքսենբուրգում, Իսպանիայում, Գերմանիայում:

Բացի վերոնշյալ երեք ծրագրերից կան նաև հակաբուլլիինգային այլ ծրագրեր: Դրանցից է մասնավորապես «Մի ծիծաղիր ինձ վրա»[35] ծրագիրը, որը նախատեսված է օգնելու տարրական և միջին դպրոցի աշակերտներին: Նախաձեռնությունն օգտագործում է երաժշտություն, տեսանյութեր, ուսումնական

[32] Finnish program against bullying//https://www.kivaprogram.net. 15.11.2022.
[33] Materials for schools, KiVa Program is meant to function as a tool box for schools//https//www.kivaprogram.net. 16.11.2022.
[34] What is the basic ideology behind the KiVa antibullying program?//https://www.kivaprogram.net. 17.11.2022.
[35] "Dont Laugh at me"- Operation Respect//https://www.ocali.org. 17.11.2022.

ծրագրեր: Դրանք փորձում են օգնել սովորողներին հասկանալ, որ անհանդուրժողականությունը տարբերությունների պատճառով բացասական երևույթ է: Աշակերտների մեջ փորձում են զարգացնել կարեկցանք նրանց հանդեպ, ովքեր տարբերվում են իրենցից և սովորել, որ ծաղրելը, անվանակոչելը ուրիշների համար վիրավորական են: Ուսուցիչներին տրամադրվում են ռազմավարություններ՝ օգնելու աշակերտներին մշակել տարաձայնությունները դրականորեն լուծելու նոր ուղիներ:

Բուլլի և Փուփ[36] ծրագրի առանցքում ուշադրությունն է բռնության ենթարկվողի և երրորդ կողմի նկատմամբ: Ծրագիրը փորձում է մեծացնել իրազեկվածությունը բռնության և դրա բացասական հետևանքների մասին: Դրա համար մասնակիցների համար փորձում են ընկալելի դարձնել ահաբեկման հետևանքների բացասականությունը: Օգնում են մասնակիցներին մշակել ագրեսիային վերջ տալու ուղիներ: Կարևոր է այն, որ մասնակիցներին փորձում են հասկացնել, որ բուլլիինգը կարող են կանխել, ոչ թե վախենալով և պարզապես դիտորդի դերում լինելով, այլ զոհերին աջակցելով:

«Պաշտպանություն» (Save) նախագիծը մշակվել է Իսպանիայում, և այն ստեղծվել է առաջին հերթին իսպանական միջավայրում ահաբեկման դեպքերի կանխարգելման, դրանց նվազեցման համար: Ուսումնասիրողները հատկանշում են, որ Իսպանիայում կրթական համակարգն հաշվի չէր առնում դպրոցներում միջանձնային հարաբերությունների կարգաբերման կարևորությունը[37]: Ուստի ինչպես ծրագրի մշակողներն են նշում, հակաբուլլինգային ծրագրերի մեխն այն է, որ նախ և առաջ ձևավորեն կրթական այնպիսի միջավայր, որում առաջնային կլինեն նաև միջանձնային հարաբերությունների նկատմամբ ուշադրությունը, սոցիալ-հոգեբանական ասպեկտի կարևորումը: Այսու այն նման է «Դրական գործողություն» հակաբուլլիինգային ծրագրին:

Հակաբուլլիինգային պայքարի գերմանական փորձառությունը նույպես շատ հետաքրքիր է և ուսանելի: Այստեղ շեշտը դրվում է զանազան դերային խաղերի վրա, որոնց միջոցով փորձում են մասնակիցների համար ըստ իրավիճակի ընկալելի դարձնել երևույթի բացասական լինելը և ցույց տալ դրա հետևանքները: Դրանցից մեկը «Դանիելի դեպքի օրինակն» է (Fallbeispiel "Daniel")[38]: Սա տարրական դպրոցում սովորող Դանիելի պատմությունն է, ում ընկերները ճնշումների էին ենթարկում նրանից անընդհատ գումար պահանջելով: Դրա համար Դանիելը ստիպված էր թաքուն վերցնել գումար և թանկարժեք խաղալիքներ: Իմանալով այդ մասին մայրը նախատում է Դանիելին, այն դեպքում, երբ անընդհատ զբաղված լինելով աշխատանքով՝ նա չէր հետաքրքվել երեխայի

[36] Bulli and Pupe, Intervention Program for the Reduction of Bullying//http://www.mentalhealthpromotion.net. 14.11.2022.
[37] R. Ortega, R. Del Rey, J. A. Mora-Merchán, Save model: an anti-bullying intervention in Spain//https://www.cambridge.org. 19.11.2022.
[38] Wenzel, Hartmut, "Mobbing in der Schule-Anti-Mobbing-Strategien", S. 27.//http://docplayer.org. 16.11.2022.

վիճակով: Ահա դերային խաղի ընթացքում, մասնակիցները փորձում են հասկանալ, թե ինչպես ճիշտ վարվել այսպիսի դեպքերում:

Անտեղյակության խաղ (Ignoranzspiel)[39] այս դեպքում յուրաքանչյուր մասնակից պետք է հանդես գա ճնշման ենթարկողի, զոհի և դիտորդի դերում: Այս դեպքում շեշտը դրվում է մասնակիցների զգացողությունների վրա՝ յուրաքանչյուրի դերում:

Շատ հետքրքիր և ուսուցողական է «Միասին մենք ուժեղ ենք» («Gemeinsam sind wir stark»): Խմբի յուրաքանչյուր մասնակցի բաժանվում են փայտե ձողիկներ: Նախ և առաջ անդամներին բացատրում են, որ այդ ձողիկները ինչպես և իրենք, ունեն իրենց ուժեղ և թույլ կողմերը, զգացմունքները: Յուրաքանչյուրը պետք է փորձի թեքել փայտե ձողը այնքան մինչև այն կոտրվի: Որոշ փայտեր կարող են ավել շուտ կոտրվել, մնացածը՝ ոչ, սակայն միևնույն է բոլորն էլ կոտրվում են: Այնուհետև մասնակիցներին բացատրում են, որ երեխաների դեպքում նույնպես այդպես է, որքան էլ հոգեպես ուժեղ լինեն, այդուհանդերձ դպրոցում բռնության ենթարկվելու դեպքում նրանք «կոտրվում են»: Հաջորդիվ մասնակիցներին հանձնարարվում է միացնել բոլոր ձողիկները: Յուրաքանչյուրը փորձում է կոտրել դրանք, սակայն միևնույն է չի ստացվում:

ՀՀ-ում, նույնպես դպրոցներում բուլլիինգի դեպքեր կան, և դրանց հաճախ կարելի է հանդիպել: Սակայն, ցավոք, չկա հստակ վիճակագրություն: Պարզ է դառնում, որ չկա նաև պետական մակարդակով պայքար բուլլիինգի դեմ: Կան իհարկե, օրենքներ, որոնք միտված են երեխաների իրավուքների պաշտպանությանը : Ի մասնավորի 1996 թ. մայիսի 29-ի «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը», որի 3-րդ հոդվածը սահմանում է, որ բոլոր երեխաներն ունեն հավասար իրավունքներ[40]: Նշենք նաև երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգի մասին[41]: Ըստ դրա ՀՀ-ում երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը մշակվել է հիմք ընդունելով երեխայի իրավուքների մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի դրույթները: Հայեցակարգը նպատակաուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ-Ի կոնվենցիաների, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը:

2012 թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ ստեղծվում է նաև Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով, որի նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է[42]:

ՎԵՐՋԱԲԱՆ

[39] Wenzel, op. cit., S. 30

[40] Հայաստանի Հանրապետության օրենքը երեխայի իրավունքների մասին//https://www.arlis.am. 18.11.2022.

[41] Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ// https://www.e-gov.am. 19.11.2022.

[42] Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու ՀՀ վարչապետի 2005 թ. հոկտեմբերի 28-ի №835 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին//https://www.arlis.am. 18.11.2022.

Դպրոցներում բռնության երևույթը անչափահասների նկատմամբ չափազանց կարևոր հիմնախնդիր է; Նախ և առաջ այն պատճառով, որ այն խանգարում է երեխաների կրթության գործընթացին և հոգեբանորեն ծանր հետևանքներ է թողնում: Սակայն հիմնախնդիրն էլ ավելի խորքային է այն համատեքստում, որ նրանք, ովքեր դպրոցներում հակված են բռնություն գործադրելու, և, իհարկե, նրանք, ովքեր ենթարկվում են բռնության դառնալու են ապագա սոցիումի մի մասը: Եվ մեծ հաշվով շարունակելու են վարքային նույն դրսևորումները, ինչ ունեցել են դպրոցում: Այդու այլևս չենք կարող խոսել սոցիալական ներդաշնակ համակեցական միջավայրի մասին: Ուստի դրա համար կարևոր է կանխարգելումը:

Երևույթն առկա է ամենուրեք, սակայն ոչ բոլոր երկրներում է իրականացվում դպրոցներում բռնության դեմ պայքարի համապարփակ քաղաքականություն: Հետազոտությունից պարզ է դառնում, որ անչափահասների նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնության դեմ ուղղորդված քաղաքականություն գլխավորապես իրականացվում է արևմուտքում (Եվրոպա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ): Մասնավորապես Եվրոպայի տարբեր երկրներում մշակվող և կիրարկվող ծրագրերը բավական արդյունավետ են, և բացի դրանից կարող են տրանսֆորմացվել և ադապտացվել տարբեր երկրների կրթական միջավայրերին այդ թվում և Հայաստանում:

Պետք է, սակայն, նշել, որ գործընթացն այնքան էլ պարզունակ չէ: Այն պահանջում է ձևավորել որոշակի մշակույթ: Հարակավոր է նախ և առաջ բուլլինգի վտանգների և դրա կանխարգելման կարևորության գիտակցումը արմատավորել հասարակության մեջ, ինչը Հայաստանի Հնարապետությունում, ցավոք, նույնպես չկա:

Այդու հարկավոր է սկսել պետական մակարդակով պայքարել բռնության դեմ, ինչն իր մեջ պետք է ներառի նախ և առաջ օրենսդրության մշակումը: Այնուհետև պետք է դպրոցներում կրթական գործընթացի պարտադիր մասը դարձնել երեխաների մոտ բուլլիինգի՝ իբրև բացասական երևույթի մասին գիտակցության ձևավորումը: Հենց այդ պատճառով անդրադարձել ենք Եվրոպայի տարբեր երկրներում այդ թվում նաև Գերմանիայում ընդդեմ բռնության մշակված նախագծերին և ծրագրերին: Համաապատասխան մշակմամբ այն կարող է կիրարկվել նաև ՀՀ դպրոցներում և վստահորեն տալ դրական արդյունքներ: Մյուս կողմից դպրոցական մշակույթի անքակտելի մասը կարելի է դարձնել արդեն հիշատակված զանազան դերային խաղերը, և ըստ կոնկերետ իրավիճակների երեխաների մոտ ձևավորել երևույթի ու դրա բացասական հետևանքների մասին հստակ պատկերացումներ: Միով բանիվ նաև մեր երկրում զուտ ակադեմիական կրթական միջավայրից պետք է անցում կատարել մի համակարգի, որում առանցքային կհամարվի նաև անչափահասների սոցիալ-հուզական վիճակի, միջանձնային հարաբերությունների կարևորումը:

Գրականություն

1. Wenzel, Hartmut, "Mobbing in der Schule-Anti-Mobbing-Strategien"//http://docplayer.org.
2. Zahlen und Fakten über Mobbing//https://zeichen-gegen-mobbing.de.
3. Бочавер А. А., Хломов, Буллинг как обьект исследований и культурный феномен//https://cyberleninka.ru.
4. В Запорожье 15-летная девушка покончила с собой из за травли в школе//https://www.5 u. a., 10.11.2022.
5. Горинова Е., «Свидетели травли: влияния, предпосылки поведения, точки роста»//https://fcprc.ru. 15.11.2022.
6. Молчанова Д. В., Новикова М. А., Противадействие школьному буллингу: Анализ международного опыта. Современная аналитика образования, №1(31), 2020.
7. Новикова М. А., Распространенность школьной травли старшеклассников в РФ: социо-экономические и образовательные факторы//https://publications.hse.ru. 14.11.2022.
8. Новикова М. А., Реан А. А., Влияние школьного климата на возникновение травли: отечественный и зарубежный опыт исследования//https://cyberleninkka.ru.
9. Новикова М. А., Реан А. А., Семейные предпосылки вовлеченности ребенка в школьную травлю: влияние психологических и социальных характеристик семьи//psyjournals.ru. 14.11.2022.
10. Шалагинова К. С., Чилачава М. К., Предпосылки проявления буллинга в дошкольной образовательной организации как индикатор неблагополучия в детском коллективе//https://cyberleninka.ru.
11. Bulli and Pupe, Intervention Program for the Reduction of Bullying//http://www.mentalhealthpromotion.net.
12. Bullying prevention in European schools-the Network//https://cesie.org.
13. "Dont Laugh at me"-Operation Respect//https://www.ocali.org.
14. Dumitru C., Emilia R. Ciuca, Understanding school bullying, EDU world 2018, The 8th international conference//europeanproceedings.com.
15. Evidence-Based Bullying Prevention Programs and Curriculum//https://www.positivaction.net.
16. Fequency of bullying in European countries 2018-Statista//https://www.statista.com.
17. Finnish program against bullying//https://www.kivaprogram.net.
18. Materials for schools, KiVa Program is meant to function as a tool box for schools//https://www.kivaprogram.net.

19. Ortega R., Del Rey R., Mora-Merchián J. A., Save model: an anti-bullying intervention in Spain//https://www.cambridge.org.
20. Suicide and Bullying, Issu Brief//https://sprc.org.
21. Texas gunman, who killd 22 was bullied at school, had troubled childhood//https://www.indiatoday.in.
22. The Guardian, News website of the year, Bullied 12-year-old struggled to get mental health support before suicide, inquest hears//https://theguardian.com.
23. The Olweus Bullying Prevention Program(OBPP)//https://www.violencepreventionworks.org.
24. What is the basic ideology behind the KiVa antibullying program?//https://www.kivaprogram.net.
25. Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2005 թ. հոկտեմբերի 28-ի № 835 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին//www.arlis.am.
26. Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգ(Հավելվա №1 ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի № 51 արձանագրային որոշման)//www.e.gov.am.
27. ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին//https://www.arlis.am.